

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Աքբար Ալիի Վալադբեյգի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԲՆԱԿ ԵԶՂԻՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԻԲ.00.03 -«Միջին մակարդակի տեսություններ, սոցիալական կառույցներ,  
սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ  
ատենախոսության

Սեդմագիր

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում

Գիտական ղեկավար՝

սոցիոլոգիական գիտությունների  
դոկտոր Մ. Ի. Զասլավսկայա

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

սոցիոլոգիական գիտությունների  
դոկտոր Ա. Մահակյան

սոցիոլոգիական գիտությունների  
թեկնածու Ս. Մանուկյան

Առաջատար կազմակերպություն՝

«Փայամ Նուր» (Payame Noor) համալսարան,  
Իրանի Իսլամական Հանրապետություն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. 08.04 -ին, ժ. 15.00 -ին,  
ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 013 մասնագիտական  
խորհրդի նիստում:

Հասցեն՝ ԵՊՀ, Աբովյան 52<sup>ա</sup>, Երևան 0025

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ 08.03 –ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
փիլիսոփական գիտությունների թեկնածու,  
դոցենտ

  
**Գ.Ա.Սողոմոնյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Ժամանակակից աշխարհում հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացվածությունը թույլ է տալիս խոսել հասարակական դաշտում նկատվող մի շարք էական փոփոխությունների մասին: Հասարակական հարաբերություններում տեղի են ունենում այնպիսի կառուցվածքային փոխակերպումներ, ինչպիսիք են ինստիտուցիոնալ նոր կառուցակարգերի ձևավորումը, անանուն, չանձնավորված հարաբերությունների աճը, այդ թվում անհատ-ինստիտուտ հարաբերությունները, անձանթթների հետ փոխհարաբերվելու հավանականության բարձրացումը: Հասարակագետներից շատերը համոզված են, որ այսպիսի պայմաններում ավելի է ընդգծվում սոցիալական վստահության անհրաժեշտությունը, առանց որի դժվար է պատկերացնել նշված կապերի գործառնումը: Այդուհանդերձ, որոշ տեսաբանների համոզմամբ սոցիալական վստահությունը ժամանակակից աշխարհում ճգնաժամ է ապրում: Ըստ այդմ, այն հարաբերությունները, որոնց ձևավորման գործում առաջնային նշանակություն ունի սոցիալական վստահության առկայությունը, կորցնում են իրենց գործառնական նշանակությունը: Նշյալ հիմնախնդիրները ներկայիս համաշխարհայնացման գործընթացների պայմաններում չեն շրջանցում նաև հայաստանյան հասարակությունը, որի կառուցվածքային տարրերի թվում կարող ենք դիտարկել նաև հայաստանյան գյուղերի եզդիական բնակչությանը՝ որպես առանձնահատուկ էթնիկ-դավանանքային փոքրամասնություն: Հայաստանում եզդիական փոքրամասնությունը բնորոշվում է էթնոմշակութային, կրոնադավանական ուրույն բնութագրիչներով, որոնք ազդեցություն են ունենում նրանց շրջանում ձևավորվող սոցիալական վստահության ձևերի վրա: Այս տիրույթում առանձնակի կարևորություն է ստանում եզդիների և հայաստանյան սոցիալական ինստիտուտների, ինչպես նաև մյուս սոցիալական խմբերի միջև փոխհարաբերությունների բարելավումը: Մյուս կողմից, նշված ուղղությամբ արդյունավետ մոդելների մշակումը հնարավոր է միայն եզդիական բնակչության շրջանում դրսևորվող սոցիալական վստահության բազմակողմանի ուսումնասիրության, դրա ձևերի և առանձնահատկությունների վերհանման միջոցով: Այս համատեքստում հարկ է պարզել ՀՀ եզդիաբնակ գյուղերում առկա իրավիճակը՝ պայմանավորված եզդիների սոցիալական վստահության առանձնահատկություններով, ինչպես նաև դուրս բերել այն գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են վստահության ձևավորման վրա: Բացի այդ, փոփոխվող պայմաններում և նշված ճգնաժամային միտումների պարագայում անհրաժեշտ է մշակել այնպիսի մոդելներ, որոնք կխթանեն վստահության հենքով գործառնող հասարակական հարաբերությունների զարգացումը:

**Հիմնահարցի գիտական մշակվածությունը:** Չնայած վստահության գաղափարի վաղեմությանը, սոցիալական համատեքստում դրա ուսումնասիրությունը և վստահության գործոնի դիտարկումը համակարգային փոփոխություններում, որպես հասարակագիտական հետազոտությունների առարկա առանձնակի կարևորություն է ստացել հատկապես քսաներորդ դարում: Սոցիալական վստահության վերաբերյալ առաջին ուսումնասիրություններում հատկանշվում են Մ.Վեբերի մոտեցումները<sup>1</sup>, ով սոցիալական վստահության

<sup>1</sup> St u Weber, M. "Selected works 1908-1932 ". Meredith Long & Co., Houston TX., 1989, pp 628-629.

ամրությունը կապում է արևմտյան երկրներում այսպես կոչված «ֆորմալացված ռացիոնալության» հաստատման, իրավական մտածողության ձևավորման հետ: Ֆ. Ջոնսոն իր հերթին գտնում է, որ վստահությունը ավելի շուտ բնորոշ է ավանդական հասարակություններին, որտեղ մարդկանց միջև դիտվում է միասնականության, շաղկապվածության ավելի բարձր մակարդակ, մինչդեռ արդյունաբերական հասարակություններում տարածված անհատապաշտական և մրցակցային երևույթները սկզբունքորեն հակասում են վստահության ձևավորմանը: Սոցիալական վստահության նոր շրջանի ուսումնասիրությունների դաշտում նշանավորվում են Ֆ. Ֆուկույամայի<sup>2</sup>, Ռ. Փաթենմի<sup>3</sup>, Ջ. Քոուլմանի<sup>4</sup>, Պ. Շտոմպկայի<sup>5</sup>, Է. Գիդդենսի<sup>6</sup> աշխատությունները: Ֆրենսիս Ֆուկույաման սոցիալական վստահության անհրաժեշտությունը կապում է որոշ ընդհանուր նորմերի նկատմամբ հասարակության անդամների համաձայնեցված, կանխատեսելի վարքագծի ձևավորման հետ, որը նպաստում է անորոշության նվազմանը և համագործակցային կապերի ընդլայնմանը: Իր վերլուծություններում Ֆուկույաման նշում է, որ վստահության մակարդակի բարձրացումը խմբի կամ կազմակերպության շրջանակներում նվազեցնում է համագործակցային հարաբերությունների վերահսկման և պահպանման համար պահանջվող ծախսերը: Հատուկ ուշադրության են արժանի Ռ. Փաթենմի հայացքները: Նա վստահությունը դիտարկում է որպես սոցիալական կապիտալի ձևավորման առանցքային տարր, փոխգործողության ցանցերի արդյունավետ գործառնման բաղկացուցիչ, որը բարձրացնում է հասարակության կազմակերպման արդյունավետությունը: Ջ. Քոուլմանը սոցիալական վստահությունը ևս տեղայնացնում է սոցիալական կապիտալի ձևավորման հիմքում: Նա գտնում է, որ վստահությունը զգալի ազդեցություն է գործում քաղաքացիական հասարակության կառուցվածքների զարգացման վրա, ինչն իր հերթին նպաստում է սոցիալական կապիտալի զարգացմանը: Քոուլմանը գտնում է, որ «վստահության հարաբերությունները» տարածվելով միջանձնային մակարդակից դեպի մակրո մակարդակ, ձևավորում են համակարգային հարաբերությունների կարգավորման նորմատիվ մեխանիզմներ: Է. Գիդդենսն իր հերթին, վերլուծելով վստահության գործառնական նշանակությունը ժամանակակից և ոչ ժամանակակից հասարակություններում, գալիս է այն եզրահանգմանը, որ ժամանակակից հասարակություններում վստահության կարիքն ավելի շատ է զգացվում քան «ոչ ժամանակակից» հասարակություններում, քանի որ ներկայիս հողարդակցման հնարավորությունները տարածական հեռավորության պայմաններում ենթադրում են վստահության առկայություն որպես հաղորդակցության նման ձևերի կարգավորմանը նպաստող կորևոր գործոն: Մյուս կողմից Գիդդենսը վստահությունը կապում է գոյաբանական հուսալիության հետ, որը մարդուն ներշնչում է վստահության, անվտանգության

<sup>2</sup> St' u **Fukuyama, F.** "Trust: The Social Virtues and Creation of Prosperity", New York, Free Press. 1995, pp. 168-184

<sup>3</sup> St' u **Putnam, R.** "Bowling along Americans; declining social capital", Journal of Democracy, Vol.6, No.1. 1995, pp.65-75

<sup>4</sup> St' u **Coleman, J.** "social capital in the creation of human capital", American journal of sociology, 1998, No.94. pp.97-103

<sup>5</sup> St' u **Sztompka, P.** "Trust: a sociological theory", Cambridge, CambridgeUniversity press.1999, pp. 37-62

<sup>6</sup> St' u **Giddens, A.** "The Formation of Social Capital", Helliwell Quarterly, 2003, No.13.

զգացում, օգնում աշխարհի նկատմամբ առավել որոշակի կողմնորոշումներ ունենալ: Պ.Շտոմպկան իր հերթին խոսում է վստահության մշակույթի մասին: Նա վստահության մշակույթի ամրապնդումը կապում է ժողովրդավարական կարգերի զարգացման հետ դիտարկելով դրանք որպես փոխալայնամավորող գործընթացներ: Շտոմպկան հասարակական մակարդակի վերոհիշյալ զարգացումները կապում է միջանձնային մակարդակում ծավալվող հարաբերությունների հետ: Միջանձնային մակարդակում նա վստահությունը սահմանում է որպես մարդկանց դրական կանխակալություն մյուսների հետագա անկանխատեսելի գործողությունների նկատմամբ: Ըստ նրա՝ միջանձնային հարաբերություններում վստահության բարձրացումը իր դրական ազդեցությունն է ունենում նաև մակրո հարթության հարաբերությունների վրա:

Քիչ չեն նաև Իրանցի հեղինակների իրականացրած հետազոտությունները Մերձավոր Արևելքում բնակվող եզդիական համայնքների շուրջ ձևավորված տեղային իրավիճակի և դրանից բխող հիմնախնդիրների վերաբերյալ: Այստեղ հատկապես ուշադրության են արժանի Ղաբար Ջիյանի կողմից կատարված ուսումնասիրությունները:<sup>7</sup> Հայաստանյան եզդիների էթնիկ փոքրամասնության ինքնութենական առանձնահատկություններին վերաբերող ուսումնասիրություններով հանդես են եկել Վ. Առաքելովան և Գ. Ասատրյանը, որոնց համատեղ աշխատությունում անդրադարձ է կատարվել եզդիների ընկալումներին հայաստանյան հասարակության այլ խմբերի վերաբերյալ, ինչպես նաև եզդիների վերաբերյալ ձևավորված հասարակական ընկալումներին: Վերոհիշյալ աշխատությունում վերլուծության է ենթարկվում հայերի և եզդիների փոխհարաբերման պատմական փորձը, համեմատական տեսանկյունից վերլուծվում են եզդիների կեցության և գործունեության պայմանները Հայաստանում և հարևան երկրներում:<sup>8</sup>

**Հետազոտության օբյեկտը** Հայաստանի գյուղաբնակ եզդիների համայնքներն են, **առարկան՝** ՀՀ գյուղաբնակ եզդիների համայնքներում սոցիալական վստահության առանձնահատկություններն ու վստահությունը պայմանավորող գործոնները:

**Սույն հետազոտության նպատակն է՝** բացահայտել Հայաստանի գյուղաբնակ եզդիների համայնքներում սոցիալական վստահության դրսևորումներն ու ձևերը, առանձնացնել դրանց առանձնահատկությունները պայմանավորող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:

#### **Հետազոտության խնդիրներն են.**

1. Բացահայտել Հայաստանի գյուղաբնակ եզդիների սոցիալական վստահության առանձնահատկությունները և դրանց դրսևորման տեսակները դիտարկելով նրանց որպես առանձնահատուկ էթնիկ-դավանանքային փոքրամասնության ներկայացուցիչներ:

1.1 Վերհանել եզդիների էթնիկ-դավանանքային փոքրամասնության ինքնության առանձնահատկությունները պատմական համատեքստում:

1.2. Անցկացնել հայաստանյան և այլ եզդիական համայնքների ինքնընկալումների դրսևորման համեմատական վերլուծություն:

<sup>7</sup> **Ciyan, G.** "A report on: Yezidis situation in Kurdistan", Euro Kurd Human Rights, Stockholm, 2008, HER, No.5.

<sup>8</sup> Տե՛ս **Asatryan, G., Arakelova V.** , (2002) "The ethnic minorities of Armenia", Yerevan, OSCE Office. pp.10-14

1.3. Չափել հայաստանաբնակ եզդիների վստահության աստիճանը հասարակության միկրո, մակրո և մեզո մակարդակներում:

1.4. Վերհանել վստահության հիմնական, վերացական և ընդհանրացված տեսակների մակարդակները և դրանց փոխառնչությունը:

2. Գնահատել սոցիալական վստահության վրա ազդող գործոնները և դրանց յուրաքանչյուրի ներգործությունը հայաստանյան գյուղաբնակ եզդիական համայնքների համատեքստում:

2.1. Պարզել սոցիալ - ժողովրդագրական առանձնահատկությունների փոխկապվածությունը սոցիալական վստահության մակարդակի հետ:

2.2. Պարզել կրոնական պատկերացումների, մշակույթի և կենսատճի գործոնների փոխկապվածությունը սոցիալական վստահության մակարդակի հետ:

3. Վերհանել ուսումնասիրվող տարածքում սոցիալական վստահության ամրապնդման հիմնախնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ անել:

### **Ատենախոսական հետազոտության մեթոդական հիմքերը**

Մեթոդաբանության տեսանկյունից սույն աշխատանքը հիմնված է սոցիալական վստահության վերաբերյալ սոցիոլոգիայի բնագավառի մի շարք հեղինակների աշխատությունների վերլուծության վրա: Տվյալ աշխատությունը գրելիս ատենախոսը սոցիալական վստահության համատեքստում ուսումնասիրել է Հայաստանի և Մերձավոր Արևելքի եզդիական համայնքների առանձնահատկություններին վերաբերվող իրանցի, հայ և խնդրով հետաքրքրված մի շարք այլ հեղինակների գիտական հրապարակումները , որոնք մասնավորապես առնչվում են Հայաստանի և Մերձավոր Արևելքի եզդիական համայնքներում առկա իրավիճակի հետազոտմանը, դրանց համեմատական վերլուծությանը, ինչպես նաև այս համատեքստում դրսևորվող հիմնախնդիրների ուրվագծմանը :

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները .

ա) **փաստաթղթերի ավանդական վերլուծության մեթոդը**, որի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հաշվետվություններ, ՀՀ-ում եզդիական համայնքի ժողովրդագրական հատկանիշների առախն, աշխարհասփյուռ եզդիական համայնքների վերաբերյալ համացանցային արդյուրներ (մասնավորապես՝ տարբեր տեղեկատվական կայքէջեր), նյութեր առցանց գրադարաններից: Օգտագործվել են նաև գրավոր վկայություններ և կենսագրական նյութեր Հայաստանի, ինչպես նաև Իրաքի, Սիրիայի, Վրաստանի եզդիական բնակչության վերաբերյալ, ուսումնասիրվել են այս բնագավառում կատարված այլ սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքներ: բ) **Հարցում կիսաձևայնացրած հարցաթերթի օգնությամբ**: Հետազոտության ընտրանքը իրականացվել է 312 հարցազրույց ՀՀ գյուղական համայնքներում բնակվող եզդիների հետ: Քանակական տվյալների հավաքման հիմքում ընկած են ընտրանքային հետազոտության սկզբունքները, որոնց համաձայն իրականացվել են կիսաձևայնացված հարցազրույցներ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերի գյուղերում բնակվող եզդիների շրջանում: գ) **խորին հարցազրույցներ**: ՀՀ եզդիական համայնքի շրջանակներում իրականացվել է տիպային ընտրանք: Հարցմանը մասնակցած բոլոր եզդիներից առանձնացվել է երեք խումբ, որոնց շրջանում իրականացվել են խորին հարցազրույցներ: Հարցման մեջ ներգրավվել է ընդհանուր թիրախային համախմբության մոտ 10%-ը՝ 30 հոգի: Հարցմանը մասնակցել են նաև մի շարք

ճանաչված լրագրողներ, ովքեր ևս եզրդիական համայնքի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսացել:

### **Ատենախոսության գիտական նորությունը:**

1. Բացահայտվել են սոցիալական վստահության ձևավորման և դրսևորման առանձնահատկությունները եզրդիական գյուղաբնակ համայնքներում, վերհանվել են սոցիալական վստահության բաղկացուցիչ տարրերի դրսևորման առանձնահատկությունները:

2. Առանձնացվել են եզրդիական ինքնության կայացման պատմական առանձնահատկությունները, մասնավորապես նրանք, որոնք կապված կոլեկտիվ հիշողության առանձնահատկությունների հետ: Համեմատական վերլուծության արդյունքում պատմասոցիալական տեսանկյունից ցույց են տրվել սոցիալական վստահության ձևավորման առանձնահատկությունները Հայաստանում և Հայաստանից դուրս բնակվող եզրդիների շրջանում:

3. Մշակվել և հիմնավորվել է սոցիալական վստահության և դրա մակարդակի չափման մոդել, որի միջոցով գնահատվել են սոցիալական վստահության մակարդակը և այն պայմանավորող նշանակալի գործոնները հայաստանաբնակ եզրդիական գյուղական համայնքներում:

### **Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:**

1. Ատենախոսության արդյունքները նպաստում են սոցիոլոգիայում և հարակից գիտակարգերում սոցիալական վստահության արդի ուսումնասիրությունների զարգացմանը, ինչպես նաև սոցիոլոգիական տեսության համալրմանն ու հարստացմանը եզրդիական համայնքներում սոցիալական վստահության առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմամբ:

2. Հետազոտության արդյունքում սոցիալական վստահության մակարդակի և այն պայմանավորող գործոնների ներազդման չափման վերաբերյալ մշակված և հիմնավորված տեսական մոդելը կարող է կիրառվել սոցիալական վստահության այլ դեպքերի սոցիոլոգիական ուսումնասիրման ընթացքում:

3. Սոցիալական վստահության մակարդակի պարբերական չափումները հնարավորություն կտան հասկանալու տարբեր սոցիալական հիմնախնդիրների արմատները և սոցիալական ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակի տատանումների միտումները:

4. Հետազոտությունը կարող է գործնական նշանակություն ունենալ ազգային փորձամասնություններին ուղղված պետական քաղաքականության մշակման առումով:

5. Ատենախոսական նյութը կարող է ներառվել սոցիալական վստահության, սոցիալական կապիտալի հիմնախնդիրներն ընդգրկող բուհական դասընթացներում:

**Ատենախոսության փորձաքննությունը:** Աշխատանքի առանձին մասեր ներկայացվել են Հայաստանում և արտերկրում հրատարակված հոդվածներում, ինչպես նաև մի շարք գիտաժողովներում ու գիտական սեմինարներում, մասնավորապես Յոհանեսբուրգի համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետում անցկացված Միջազգային Սոցիոլոգիական Ընկերակցության (ISA) 10-րդ միջազգային գիտաժողովում, Հարավային Աֆրիկա, նոյմբերի 7-13, 2011թ., ինչպես նաև «Քաղաքական վերափոխումը և հասարականան փոփոխությունները Հարավային

Կովկասում» շվեյցարական ակադեմիական ցանցի (ASCN) 2-րդ տարեկան համաժողովում, հունիսի 29-30, 2012թ., Երևան, 7-րդ «BATHYÁNY» ամառային դպրոցում, Գյոթ, Հունգարիա, հուլիսի 13-22, 2012թ., «Հասարակական առաջընթաց՝ տեսական և գործնական գաղափարներ» թեմայով համաժողովում, Միկոլաս Ռոմբերիս համալսարան, հոկտեմբերի 25-26, 2012թ. «Սոցիոլոգիականություն» վերլուծական ակումբ, Խարկովի ազգային համալսարան, Ուկրաինա, նոյեմբերի 5, 2012թ. : Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետի Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում /21.05.2015 թ./ և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (12 ենթագլուխ), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատության ծավալը 172 էջ է:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** ներկայացված է հիմնախնդրի նկարագրությունը, հիմնավորված է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, աշխատանքի կառուցվածքը: Ներածական մասում ներկայացված է նաև ատենախոսության հիմնական նպատակը, գիտական նորույթը:

**Ատենախոսության առաջին գլուխը. «Սոցիալական վստահությունը որպես սոցիոլոգիայի ուսումնասիրության օբյեկտ»,** բաղկացած է չորս ենթագլուխից:

**Առաջին ենթագլուխ. «Սոցիալական վստահության ուսումնասիրության տեսական հիմքերը»:** այստեղ սոցիալական վստահությունը քննվում է միկրո, մեզո և մակրո մակարդակներում: Մասնավորապես համակարգային ուղղության հետևորդները վստահության ֆենոմենը դիտում են որպես սոցիալական համակարգի հատկանիշ: Այս համատեքստում իրենց մեկնաբանումներն են առաջարկում այնպիսի տեսաբաններ, ինչպիսիք են Դ. Գամբետան (Diego Gambetta), Ջ.Բոուլման (James Coleman), Ռ. Փաթնեմը (Robert Putnam), և Ֆ. Ֆուկույաման (Francis Fukuyama), որոնք սոցիալական վստահությունը կապում են սոցիալական կապիտալի ձևավորման հետ: Նրանց համոզմամբ, վստահությունը լինելով սոցիալական կապիտալի կարևոր բաղադրիչ, կարող է պայմանավորել հասարակական կազմակերպությունների և ինստիտուտների գործունեությունը:<sup>9</sup> Ինչ վերաբերվում է վստահության հասնառության սահմանումներին, ապա այստեղ նշանավորվում է Գիդդենսի (Anthony Giddens) ըմբռնումը, որտեղ վստահությունը սահմանվում է որպես ապավինում այլ մարդկանց բնույթին ու առաքինությանը կամ նրանց խոսքերի ճշմարտացիությանը:<sup>10</sup> Ենթագլխում վստահության բացակայությունը դիտվում է որպես նորմայից շեղում և կապվում է անումիայի Դյուրկհեյմյան և Մերթոնյան հայեցակարգի հետ նախանշելով հասարակական արժեհամակարգի պաթոլոգիկ վիճակ: Ռոնալդ Ինգելհարթն իր հեթորին նշում է, որ կյանքի որակն ու բարեկեցությունը խիստ փոխկապակցված են համընդհանուր վստահության հետ: Վերջինս 1990-թվականներից մեկնարկած 43 երկրներում անցկացված իր պարբերական

<sup>9</sup>Տե՛ս **Gambetta D.** (1988) "Can We Trust?"Oxford, Basil Blackwell. pp. 229-234

<sup>10</sup>Տե՛ս **Giddens A.** (1990) "The consequences of modernity", California, Stanford University Press. pp. 83-100



հետազոտությունների արդյունքում պարզում է, որ կյանքի հանդեպ տաճած գոհունակության զգացման հետ միասին վստահությունը նույնպես փոխկապակցված է տնտեսական զարգացման հետ:<sup>11</sup> Մ.Ռիսերը (Raiser) որոշ վերապահումներ է տեսնում վստահություն-տնտեսական զարգացում կապի առնչությամբ: Ռիսերի հետազոտությունը ցույց է տալիս, որ հասարակական ինստիտուտների հանդեպ վստահությունը դրական հարաբերակցություն ունի տնտեսական աճի հետ՝ այս առումով ամենաուշագրավները դատական և ոստիկանական ինստիտուտներն են, մինչդեռ լրատվամիջոցների և եկեղեցու հանդեպ վստահությունը ոչ մի կապ չունի տնտեսական աճի հետ:

**Երկրորդ ենթագլուխ. «Մոցիալական վստահության տարրերի կոնցեպտուալ սահմանումը»:** Այս ենթագլխում տարբեր տեսական հայեցակարգերի հիման վրա հեղինակի կողմից նշվում և բնութագրվում են վստահության հիմնական տեսակները՝ *հիմնական վստահություն*, անձի վերաբերմունքն ինքն իր և աշխարհի նկատմամբ: Վստահության այս տեսակը մարդու կյանքի փորձի հետևանք է: Սա կարելի է բնութագրել, որպես ընտանիքի անդամների և ընկերների հետ ոչ լարված հարաբերությունների ստեղծում, դրական վերաբերմունք կյանքի, ապագայի և այլոց նկատմամբ, մասնագիտական բավարարվածություն և վստահություն ընտանիքի անդամների հանդեպ: *Ընդհանրացված վստահություն*. վստահության այս տեսակի դեպքում մարդիկ վստահում են մյուսներին՝ ելնելով նրանց մասին ունեցած իրենց պատկերացումներից: Այլ կերպ ասած՝ մարդն ապավինում է այն տեղեկությանը, որը նա ստացել է ուրիշներից: *Ընդհանրացված վստահությունը* կարելի է բնութագրել այնպիսի տարրերի միջոցով, ինչպիսիք են վստահությունը գործընկերների, քաղաքացիների նկատմամբ և պարտավորվածության զգացումի առկայությունը դեպի արտախմբային օղակները, վստահություն մերձավորների և հասակակիցների նկատմամբ: *Վերացական վստահություն*. վստահության այս տեսակի դեպքում մարդիկ որոշակի վստահության մակարդակ են ունենում հասարակական համակարգերի, այդ թվում քաղաքական վարչակազմի, քաղաքային խորհուրդների, ուժային մարմինների, ՁԼՄ-ների, առողջապահական և կրթական կառույցների հանդեպ: Գիդդենսը (Giddens) մատնանշում է, որ նրանք, ովքեր վարում են բարեկեցիկ կենսակերպ, ունեն բարձր կրթական մակարդակ և հասարակական դիրք, կարող են բնութագրվել, որպես վերացական վստահության բարձր ցուցանիշի կրողներ:<sup>12</sup> Եզրափակելով կարող ենք նշել, որ ընդհանրացված վստահության պարագայում նկատի են առնվում այն հարաբերությունները, որոնք դրսևորվում են առերես շփումներում. այն է՝ վստահությունը մարդկանց միջև, վերացական վստահության պարագայում վստահության դրսևորումները ընդգրկում են *մարդ - հասարակական ինստիտուցիոնալ համակարգեր* հարաբերությունները:

**Երրորդ ենթագլուխը «Մոցիալական վստահության վրա ազդող հիմնական գործոնները»** նվիրված է սոցիալական վստահության մակարդակի ուսումնասիրմանը, դրա վրա ազդող տարրերի բացահայտմանն ուղղված մի շարք հետազոտությունների, տեսական որոնումների քննական վերլուծությանը: Ենթագլխում ատենախոսը տեսական հենքի վրա ներկայացնում է այն փոփոխականների համակարգը, որոնց միջոցով նախատեսում է ուսումնասիրել ընտրված համախմբության սոցիալական վստահության մակարդակը: Այս համատեքստում

<sup>11</sup> Տե՛ս **Inglehart R.** (1990) "Culture shift in Advanced industrial society", Princeton, PrincetonUniversity. pp. 26-43

<sup>12</sup> **Giddens A.**, (2003) "The Formation of Social Capital", Helliwell Quarterly, No.13.

ուսումնասիրվել են հետևյալ փոփոխականները: *Հասարակական կարգ և անվտանգությունը*: Այս փոփոխականը ենթադրում է հասարակությունում բռնության, կոռուպցիայի և այլ ապօրինությունների բացակայություն կամ դրանց ցածր մակարդակը: Եթե հասարակությունում բարձր է վստահությունյան մակարդակն, ապա նման հասարակություններում վերահիշյալ բացասական երևույթների չափաբաժինը համեմատաբար ցածր կլինի: *Կրոնական հավատալիքների և արժեքների ընդունելիությունը հասարակության շրջանում*: Կրոնական արժեքների ամրությունը հասարակությունում առենախոսը դիտարկում է որպես հասարակական ինտեգրմանը, շաղկապվածությունը նպաստող հանգամանք: Այս փոփոխականը կարող է ուսումնասիրվել հետևյալ ցուցիչների շրջանակներում՝ շաբաթվա կամ ամսական կտրվածքով կրոնական ծիսակատարություններին հետևելու հաճախականությունը, կրոնական արարողություններում ներգրավվածություն ունենալը, կամավոր բարեգործական ծրագրերին մասնակցություն ցուցաբերելու պատասխանակությունը և այլն: *Ներընտանեկան հաղորդակցությունը* որպես վստահության ձևավորման հիմնարար ինստիտուցիոնալ մեխանիզմ: Այս փոփոխականի ներքո առենախոսը ընտանիքն իր սոցիալականացնող նշանակությամբ դիտում է որպես վստահության ձևավորման հիմնարար ինստիտուտ, որտեղ ներընտանեկան հաղորդակցությունը միջանձնային վստահության ձևավորման նախնական ձևերից է: *Մարդկային փոխհարաբերությունների* բնույթը: Այս դեպքում մարդկային փոխհարաբերությունների, հասարակական փոխգործողությունների որակական առանձնահատկությունները դիտվում են որպես վստահության ձևավորման կարևոր նախապայման: *Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներ*: Այս փոփոխականը ևս կապվում է սոցիալական վստահության ձևավորման հետ: Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշների թվում դիտարկվում է անձի տարիքը, սեռը, ընտանեկան կարգավիճակը, ծննդավայրը, հասարակական խավի պատկանելիությունը, զբաղմունքը, կրթությունը և գործունեությունը: Վերոնշյալ գործոնների առատությունը էլ ավելի է ընդգծում սոցիալական վստահության և այլ գործոնների պատճառա-հետևանքային կապերի վերհանման ուղղությամբ խորքային ուսումնասիրություն անցկացնելու անհրաժեշտությունը:

Ամփոփելով հետազոտությունների արդյունքները կարող ենք եզրակացնել, որ սոցիալական վստահության բարձր մակարդակը սահմանափակվում է գլխավորապես ընտանեկան կապերի շրջանակներում, մինչդեռ ընտանեկան հարաբերություններից դուրս վստահության մակարդակը զգալիորեն նվազում է, ինչը թույլ է տալիս խոսել ուսումնասիրված համայնքներում սոցիալական ցանցերի նվազ ընդարձակության և սոցիալական կապիտալի մասնատվածության մասին:

**Չորրորդ ենթագլուխ. «Սոցիալական վստահության ուսումնասիրության կարևորությունը»:** Այս ենթագլխում հիմնավորվում է Հայաստանի եզդիական գյուղերում սոցիալական վստահության ուսումնասիրության ուղղված սույն հետազոտության հրատապությունը, մատնանշվում է ժամանակային տարբեր հեռանկարներում հետազոտության կարևորությունը: Ելնելով տեսական այն ըմբռումներից, որ սոցիալական վստահությունը հասարակական կայունության, սոցիալական կապիտալի ամրության և հասարակական անվտանգության երաշխիքներից է, հեղինակը նշում է, որ հայաստանյան եզդիական համայնքում իրականացված նման հետազոտությունը կարող է ծառայել որպես տեղեկատվության օգտակար աղբյուր Հայաստանում իրականացվող հետագա ուսումնասիրությունների համար: Սույն հետազոտության թեմատիկ ուղղվածությունից ելնելով՝ առենախոսն անդրադառնում է որոշ տեսական դրույթների, որոնք վերաբերվում են վստահության գործոնով պայմանավորված էթնիկ փոքրամաս-

նությունների և բնակչության մյուս խմբերի միջև (այդ թվում տվյալ երկրի տիտղոսային ազգության) փոխհարաբերություններին: Այս շրջանակներում Ֆուկույաման ազգային պատկանելիությունը դիտում է որպես խթան միննույն խմբի ներկայացուցիչների համար, մինչդեռ տարբեր խմբերի փոխհարաբերությունների դեպքում վերջինս նշում է, որ ազգային պատկանելիությունը կարող է խոչընդոտ և կոնֆլիկտների առիթ հանդիսանալ<sup>13</sup>: Տեսաբաններից Լեյդը, նույնպես պաշտպանում է այս տեսակետը: Նա ևս էթնիկ բազմազանությունը կապում է վստահության ցածր մակարդակի հետ: Ըստ նրա սովորաբար մեծամասնությանը պատկանող հասարակության անդամներն ունեն հակակրանք փոքրամասնության հանդեպ<sup>14</sup>: Այս շրջանակներում Կումլինի (Kumlin) կողմից իրականացված հետազոտությունները հավաստում են, որ էթնիկ փոքրամասնությունները մեծամասնության հետ համեմատած ցուցաբերում են վստահության առավել ցածր մակարդակ: Հետևաբար այս անհամապատասխանությունը կարող է հանգեցնել որոշ խնդիրների, հատկապես այն դեպքերում, երբ այս երկու խմբերի փոխառնչությունը անխուսափելի է: Համաձայն այս կարծիքի՝ այս երկու խմբերի միջև վստահության բացակայությունը հանգեցնում է բռնաճնշման, տնտեսական որոշ դժվարությունների և խտրականության: Ելնելով վերոնշյալ տեսական կանխադրյալներից՝ հեղինակը խնդիր է դնում ուսումնասիրել սոցիալական վստահության առանձնահատկությունները հայաստանյան եզդիների էթնիկ փոքրամասնության շրջանակներում:

**Ատենախոսության երկրորդ գլուխը. «Եզդիները սոցիալական վստահության համատեքստում»** բաղկացած է չորս ենթագլուխներից: **Առաջին ենթագլխում. «Եզդիների ծագումը և էթնո-կրոնական առանձնահատկությունները»** ներկայացված է եզդիների ծագումնաբանությունը, եզդիներին բնորոշ կրոնադավանական, էթնիկական, պատմամշակութային բնութագրիչները: Պատմական տարբեր վկայությունների համաձայն եզդիները իրանալեզու ժողովուրդ են, ապրում են Թուրքիայի հարավ-արևելքում, Իրաքում (գլխավորապես՝ Մոսուլի և Սինջարի շրջաններում), Իրանում, Սիրիայում, Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Աֆղանստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում: Ենթագլխում նշվում են եզդիների ծագումնաբանության շուրջ ձևավորված ընկալումներին վերաբերվող մի շարք տարրնթերցումներ, որոնք եզդիական ինքնության կայացման հարցում մի շարք իմացաբանական հիմնախնդիրներ են առաջ բերում: Մասնավորապես տվյալ համատեքստում շրջանառվող այն տարածված կարծիքը, որ եզդիները եղել են գրադաշտներ, հիմնագուրկ է:<sup>15</sup> Նաև տարածված է թյուր կարծիք, թե եզդիների անվանումը կապված է Եզդ քաղաքի հետ, մինչդեռ եզդիները երբևէ չեն ապրել այդ քաղաքում: Գոյություն ունի տեսակետ, որ եզդիներն ունեն քրդական ծագում հնագույն հնդիրանական արմատներով, սակայն այս տեսակետը ևս բոլոր գիտնականների և պատմաբանների կողմից միարժեքորեն չի ընդունվում: Եզդիների հիմնական առանձնահատկությունների թվում նշվում է այն, որ նրանք, չունենալով պետականություն և սփռված լինելով աշխարհի տարբեր երկրներում,

<sup>13</sup> Fukuyama F., (1997) "Social capital", The Tanner Lectures on Human Values, Delivered at Oxford, Ulta University.

<sup>14</sup> St' u Leigh A., (2006) "Trust, inequality, and ethnic heterogeneity", The Economic Record, Vol. 82, No. 258. pp.268-280

<sup>15</sup> St' u Anqosi K., (2005) "The Yezidi/Kurds' Tribes & Clans of South Caucasus", The International Journal of Kurdish Studies, Paris, Peeters, Vol.19.p.59

այնուամենայնիվ չեն կորցնում իրենց էթնիկական ուրույն հատկանիշները և գրեթե չեն ասիմիլացվում այլ էթնիկ խմբերի հետ: Վերջին տարիների ժողովրդագրական տվյալների համաձայն, եզդիների թիվն աշխարհում անցել է 2 միլիոնից: Եզդիների ամենախոշոր համայնքը գտնվում է Իրաքում, ուր ապրում է մեկ միլիոնից ավելի եզդի: Իրաքից բացի եզդիները ապրում են Հնդկաստանում, Աֆղանստանում, Գերմանիայում (300 000), Թուրքիայում (10 000), Սիրիայում (20 000), Ռուսաստանում (մոտ 350 000), Վրաստանում (50 000) և այլուր: Հայաստանում եզդիների թիվը հասնում է 60 000-ի:<sup>16</sup> Ընդորում վերոնշյալ երկրներից Հայաստանը միակն է, որտեղ կա եզդիերեն լեզվի և գրականության ուսուցմամբ 23 դպրոց, որտեղ տպագրվել և տպագրվում են եզդիերեն դասագրքեր և գեղարվեստական գրքեր, ինչպես նաև «Էզդիխանա» լրագիրը, որտեղ հեռարձակվում է օրական կես ժամյա եզդիերեն ռադիոհաղորդում: Եզդիական համայնքները պատմության ընթացքում առանձնացել են իրենց պարփակ բնույթով, ինչը նպաստել է նրանց շուրջ կարծրատիպերի և անհստակ պատկերացումների ձևավորմանը, նրանց նկատմամբ սոցիալական անվստահության առաջացմանը: Եզդիների հարցերով զբաղվող արևելագետ Վիկտորիա Առաքելովան (Victoria Arakelova) նշում է, որ այս խեղաթյուրումները եզդիականության գաղտնիության հետ են կապված: Իսլամից հեռանալով և միայն իրենց սուրբ գրքի ուսմունքների վրա հիմնվելով՝ եզդիները երբեք չեն ընդունել արաբական կամ որևէ այլ գրատեսակ՝ մատնելով իրենց «անգրագիտության և անհայտության»<sup>17</sup>: Հիմնվելով վերոնշյալի վրա եզդիներին բնորոշ էթնիկական տարրերի թվում կարող ենք նշել նրանց չձուլվելու հատկությունը, եզդիական համայնքների պարփակվածությունը, եզդիների կրոնադավանական ուրույն պատկերացումները:

**Երկրորդ գլխի երկրորդ ենթադիտում. «Հայաստանաբնակ եզդիների դրությունը և առանձնահատկությունները»** հեղինակն անդրադառնում է Հայաստանում եզդիների հաստատման և բնակության պատմական նախադրյալներին, նկարագրում է եզդիների ներկայիս իրավիճակը Հայաստանում: Այս համատեքստում նշվում է, որ Հայաստանը համարվում է Օսմանյան կայսրության արևելյան շրջաններից եզդիների ներգաղթի ամենահայտնի վայրը: Ընդորում նշվում է, որ եզդիական ամենամեծ բնակատեղին լինելուց բացի Հայաստանը նաև Խորհրդային Միությունում քրդական մշակութային կենտրոնն է եղել: Պատահական չէ այն, որ և՛ եզդիները, և՛ մահմեդական քրդերը սովետական Հայաստանում հարաբերակնորեն ապահով ապաստան են գտել:<sup>18</sup> Մյուս կողմից կան փաստացի վկայություններ, որ այլ տարածաշրջաններում եզդիները բազմիցս ենթարկվել են ճնշումների և զանգվածային հալածանքների: Մասնավորապես խոսվում է այն մասին, որ միայն 1915-1918 թթ. Օսմանյան կայսրությունում սպանվել են ավելի քան 500 000 եզդիներ: Այս երևույթը դեռ շարունակվում է, քանի որ 2007 թ. օգոստոսի 14-ին Իրաքի հյուսիսային մասի Շանգալ կամ Սինջար կոչվող

<sup>16</sup> Տե՛ս **Ackermann A.**, (2004) "A Double Minority: Notes on the Emerging Yezidi Diaspora, Identity and Religion : New Directions in Theory and Research", London, Routledge, pp.156-69

<sup>17</sup> Տե՛ս **Asatryan, G., Arakelova V.**, (2002) "The ethnic minorities of Armenia", Yerevan, OSCE Office. pp.10-11

<sup>18</sup> Տե՛ս **Russo, D., Yildiz D.**, (2000) "Azerbaijan and Armenia: An Update on Ethnic Minorities and Human Rights", London, KHRP. pp.32-40

տարածքում երկու եզդիական գյուղ՝ հազարից ավել բնակչությամբ հիմնովին ավերվեցին և հրի մատնվեցին մահմեդական ծայրահեղականների կողմից:

Հետաքրքրական են հայաստանյան եզդիների ինքնության շուրջ ձևավորված պատկերացումները: Խոսվում է այն մասին, որ մինչև 1922 թ., հայաստանաբնակ եզդիները համարվում էին քրդերից անջատ էթնիկ խումբ, սակայն 1936-1989 թթ. նրանք ընկալվեցին որպես միևնույն էթնոլեզվական խումբ, որն առանձնանում է միայն կրոնով<sup>19</sup>: 1980-ականների վերջին, եզդիների ինքնության վերածնունդը ուղեկցվեց ազգային ինքնագիտակցության բարձրացմամբ, իսկ 1989 թվականին եզդիները Հայաստանի իշխանությունների կողմից դիտվեցին որպես առանձին բնակչություն:

Հայաստանում եզդիական բնակչությունը տեղաբաշխված է Արագածի, Արմավիրի, Աշտարակի, Թալինի, Արտաշատի, Արուսեանի և այլ մարզերի գյուղական տարածքներում, ինչպես նաև Երևանում, Էջմիածնում, Արմավիրում, Աշտարակում և այլ քաղաքներում: Նրանց որոշ մասը, զբաղվելով հիմնականում անասնապահությամբ, պահպանել է իր ավանդական քոչվոր ապրելակերպը: Զգալի մասը վերջին տասնամյակների ընթացքում սկսել է զբաղվել նաև այգեգործությամբ և այլ գյուղատնտեսական գործունեությամբ: Վերոնշյալ տեղեկությունների վրա հիմնվելով կարելի է եզրակացնել, որ եզդիներն իրենց ինքնութենական տարրերով հանդիսանում են առանձին էթնիկ կազմավորում: Պարզ է դառնում նաև, որ Հայաստանի հետ կապված եզդիների դրական ընկալումները պայմանավորված են Հայաստանում նրանց կենսագործունեության համար առկա ներկայիս նպաստավոր պայմաններով, ինչպես նաև համակեցության երկարամյա պատմական փորձով, ինչպես նաև այդ ընթացքում պատմական նույն իրողություններում հայտնվելու հանգամանքով:

### **Երրորդ ենթաբաժնում «Եզդիների դրությունը Հայաստանից դուրս»**

հեղինակն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում մերձավոր արևելքում բնակվող եզդիների հիմնախնդիրներին: Ներկայումս Իրաքում բնակվող եզդիները մի շարք սպառնալիքների են հանդիպում, այստեղ հեղինակը նշում է քրդական կազմավորումների կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքը, որի արդյունքում եզդիական բնակավայրերը անցնում են քրդական խմբավորումների վերահսկողության տակ: Անդրադառնալով այս գործընթացների քաղաքական շարժառիթներին Անվար Մուալիվա ալ-Ամավին (Anwar Muawiya al-Amawi) նշում է, որ քուրդ հոգևոր ու քաղաքական առաջնորդները խրախուսում էին հարուստ քրդերին գնել աղքատ համայնքներին պատկանող հողատարածքները ոչ խելամիտ գներով: «Քրդերը նպատակ են հետապնդում գնել այլ փոքրամասնություններին (ինչպիսիք են, օրինակ, եզդիները) պատկանող հողատարածքները, որպեսզի միավորեն իրենց անկլավների տարածքները»,- սսել է Ամավին: Հաջորդ սպառնալից դրսևորումները, որի հետ բախվել են Իրաքի հյուսիսային շրջանում ապրող եզդիները, ԱՄՆ-ի կողմից իրագործված ոմբակոծություններն ու ռազմական գործողություններն էին: Մասնավորապես օգոստոսի 17-ի պայթյունների շղթան ավերվեց Մուսուլի արևմուտքում գտնվող Նինջար տարածքի մեկուսի եզդիական գյուղերը, ինչի հետևանքով զոհվեց ավելի քան 500 մարդ և հազարավորները ծանր վիրավորվեցին: Տարբեր վկայությունների համաձայն մինչև ԱՄՆ-ի ռազմական ներխուժումը 2,000,000

<sup>19</sup> Տե՛ս **Asatryan, G., Arakelova V.**, (2002) "The ethnic minorities of Armenia", Yerevan, OSCE Office. pp.10-14

եզդիներ մեկուսացված, սակայն խաղաղ բնակվում են Իրաքում, սակայն դրանից հետո այս թիվը մոտ 500,000-ով կրճատվեց: Ահաբեկման այս մթնոլորտը վտանգում է հասարակության տարբեր մակարդակների հանդեպ ունեցած վստահության հենքով գործող փոխհարաբերությունները: Օրինակ, 2009թ. Փոքրամասնությունների իրավունքների միջազգային կազմակերպությունը (MRG), հայտարարեց, որ Իրաքի փախստականների 15-64 տոկոսը կրոնական կամ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ են: Ինչ վերաբերվում է Թուրքիայի եզդիական բնակչությանը, ապա այստեղ եզդիները փաստացի ենթակրկվում են ինչպես կրոնական այնպես էլ ազգայանական ուժերի կողմից դրսևորվող խտրականությանը: Պատմական աղբյուրները վկայում են Թուրքիայի կենտրոնական իշխանությունների և տեղական քրդական էլիտայի կողմից բազմիցս կրկնվող կազմակերպված հալածանքների և փաստացի բնաջնջումների մասին: 19-րդ դարի վերջերից սկսած եզդիները աստիճանաբար հաստատվում են նաև Ռուսաստանում: Դեպի Ռուսաստան եզդիներին հոսքը հատկապես ուժեղացավ 20-րդ դարի սկզբին: Ռուսաստանի Դաշնությունում առկա են եզդիների կազմակերպված համայնքներ, ստեղծվում են կրոնամշակութային նոր կենտրոններ, որոնք նպաստում են եզդիների ինքնության պահպանմանը: **Չորրորդ ենթագլխում՝ «Եզդիները և սոցիալական վստահության հիմնախնդիրները»**, դուրս են բերվում այն գործոնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են եզդիական համայնքներում սոցիալական վստահության ձևավորմանը: Հեղինակն իրաքյան եզդիների հետ կապված վստահության ցածր մակարդակը և դրա արդյունքում նկատվող խտրական երևույթները նախևառաջ մեկնաբանում է ելնելով Պ.Շոտմպկայի տեսական դրույթներից, ըստ որոնց վստահության պակասը անխզելիորեն կապվում է ժողովրդավարության բացակայության հետ: Իրաքյան եզդիների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող Սիդո Ռաշոն (Seedo Rasho), վերլուծելով եզդիական մի շարք համայնքներում առկա վստահության մակարդակը, պնդում է, որ պետք է բարձրացվի հասարակության իրազեկման մակարդակը և լավագույնս օգտագործվի Հյուսիսային Իրաքում բնակվող ազգային փոքրամասնությունների ներուժը: Ենթադրվում վերլուծվում են մի շարք դրույթներ, որոնք ըստ վերոնշյալ հեղինակի, կարող են բարձրացնել վստահության մակարդակը եզդիական համայնքներում: Դրանց թվում են քաղաքական կուսակցությունների միջազգային լոբբիի, սոցիալական և այլ իրավապաշտպան կազմակերպությունների ստեղծումը, միջազգային հանրության պաշտպանության ներքո կիսաինքնավար շրջանների ձևավորումը, ազգային հարստության վերաբաշխումը ըստ բնակչության իրավունքի, այլ ոչ թե ըստ կլանային կամ տոհմական կապերի, ինչի հետևանքով կարող է նվազեցվել այս տարածաշրջանի ազգային փոքրամասնությունների գաղթի հզոր ալիքը: Սիդո Ռաշոյի այդ առաջարկները համապատասխանում են այն պնդմանը, որ «արդարև հարգալից վերաբերմունքը համայնքի անդամների շրջանակներում սերմանում է ներգրավվածության զգացում, որն էլ հանգեցնում է սոցիալական վստահության և կարգուկանոնի մակարդակի բարձրացմանը»<sup>20</sup>: Ենթադրվում հեղինակը քննելով եզդիների հիմնախնդիրները և դրա հիմքում ընկած պատճառային գործոնները, անդրադառնում է սոցիալական վստահության և ժողովրդավարական սկզբունքների

<sup>20</sup> Sté u **Share'apour M.**, (2008) "Erosion of social trust and its consequences", Sociological Association Newsletter, Vol. 1. pp.59-84 (պարսկերեն լեզվով)

փոխառնչությանը: Տեսական դրույթների հիման վրա հեղինակը գալիս է այն եզրահանգմանը, որ ժողովրդավարական սկզբունքների հիմքում ընկած մի շարք գաղափարներ, այդ թվում հանդուրժողականություն, բազմակարծության, բազմազանության խթանումը, խոսքի ազատությունը և տեղեկացվածությունը վերացնում են հասարակական տարբեր խմբերի միջև եղած պատնեշները նպաստելով վստահության կապերի առաջացմանը:

**Երրորդ գլխի «Հայաստանի գյուղաբնակ եզդիների սոցիալական վստահության դրսևորումների սոցիոլոգիական վերլուծություն» առաջին ենթագլխում «Հայաստանի գյուղաբնակ եզդիների սոցիալական վստահության հետազոտման մեթոդաբանական և մեթոդական հիմնախնդիրները»** ներկայացված են հետազոտության մեթոդաբանական և մեթոդական հիմքերը, հետազոտության խնդիրներն ու նպատակները, նշված են տվյալների հավաքման հիմնական մեթոդները (*փաստաթղթերի ավանդական վերլուծություն, կիսա-ձևայնացված հարցազրույց, խորին հարցազրույց*), գլխավոր և ընտրանքային համախմբությունների նկարագիրն ու ընտրանքի ծավալը, տվյալների վերլուծության համար օգտագործված վիճակագրական թեստերը և գործակիցները (*մասնավորապես,  $\chi^2$  (խի-քառակուսի) թեստը, Սփիրմենի (Spearman) և Քենդալի գործակիցները և այլն*) դրանց նշանակությունը, ներկայացվել է տվյալների վավերականացման և հավաստիության ստուգման մեթոդը, հետազոտության գործնական նշանակությունը:

**Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում «Հայաստանի գյուղաբնակ եզդիների ընդհանուր սոցիալական պատկերը»** ներկայացված են թիրախային խմբում ներառվածների սոցիալ-ժողովրդագրական հատկանիշները, նրանց կողմնորոշումը վստահության տարբեր տեսակների վերաբերյալ: Ըստ ընտանեկան կարգավիճակի եզդիական համայնքը բնութագրվում է հետևյալ կերպ. հարցվածների 66.7% եղել են ամուսնացած, 26%ը՝ չամուսնացած, իսկ մնացած 7.3% պատկանել են այլ դասակարգման: Ըստ կրթական մակարդակի հարցվածների 0.6%-ը անգրաճանաչ էր, մինչդեռ 83%-ն ուներ ընդհանուր կամ միջնակարգ կրթություն, և համապատասխանաբար 16.4%-ն ուներ բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն: Հետազոտվող համախմբության միայն 53.3%-ն է տնտեսապես ակտիվ, այսինքն՝ աշխատում են կամ փնտրում են աշխատանք: Մնացած 47.4% տնտեսապես ոչ ակտիվ են: Ընդհանուր առմամբ, հարցվածների 38.22%-ը ցուցաբերել է **ընդհանրացված վստահության** շատ բարձր մակարդակ: Շատ ցածր, ցածր, միջին և բարձր մակարդակները կազմում են համապատասխանաբար 2.5%, 8.0%, 20.9%, և 30.4%: Հարցվածների 6.9%-ն ուներ շատ ցածր, 10.4%-ը՝ ցածր, 20.4%-ը՝ միջին, 26.8%-ը՝ բարձր, իսկ 35.6%-ը՝ **վերացական վստահության** շատ բարձր մակարդակ: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հարցվածների 62.4% -ն ուներ վերացական վստահության բարձր կամ շատ բարձր մակարդակ: Հարցվածների 21.4%-ը ցուցաբերել է շատ բարձր 26.7%-ը՝ բարձր, 28.7% -ը՝ միջին, 13.1%-ը՝ ցածր և 10.1%-ը՝ **հիմնական վստահության** շատ ցածր մակարդակ: Ստացված տվյալների համաձայն վստահության մյուս երկու տեսակների համեմատ (վերացական և ընդհանրացված)՝ հիմնական վստահությունը բարձր մակարդակ չի ապահովում, քանի որ հարցվածների միայն 48.1%-ն է ունեցել հիմնական վստահության շրջանակներում առանձնացված փոփոխականների նկատմամբ բարձր կամ շատ բարձր մակարդակ: Սա իր հերթին վկայում է այն մասին, որ Հայաստանի գյուղաբնակ եզդիների շրջանում բարձր է վստահությունը ինստիտուցիոնալ համակարգերի, անձանթների, սեփական սոցիալական խմբում չընդգրկված անձանց նկատմամբ:

**Երրորդ ենթագլուխ. «Հայաստանի գյուղաբնակ եզդիների սոցիալական**

**վստահության վրա անհատական սոցիալական բնութագրիչների ազդեցության վերլուծությունը»:** Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ սոցիալական վստահության մակարդակի վրա հարցվածների տարիքը, զբաղվածությունը, ընտանեկան կարգավիճակը նշանակալի ազդեցություն չունեն: Սոցիալական վստահության մակարդակի վրա ազդեցության տեսանկյունից սեռը նույնպես նշանակալի գործոն չէ. այս առումով կանայք և տղամարդիկ նմանատիպ պատկերացումներ են արտահայտում:

**Չորրորդ ենթագլուխը «Հայաստանի գյուղաբնակ եզդիների սոցիալական վստահության վրա ազդող հիմնական գործոնների բազմաչափ վերլուծություն»** նվիրված է առանձնացված մի շարք փոփոխականների և սոցիալական վստահության մակարդակի փոխառնչության բացահայտմանը: Այս համատեքստում զգալի կապ է գրանցվել սոցիալական վստահության և ներընտանեկան հաղորդակցության փոփոխականի միջև: Ընդ որում, 99% կամ ավել հավանականության դեպքում վստահաբար կարելի է պնդել, որ այս փոփոխականների միջև ուղիղ և դրական հարաբերակցություն գոյություն ունի: Կրոնական արժեքների ընդունման մակարդակը նշանակալի և կարևորագույն տարր է հանդիսանում սոցիալական վստահության մակարդակի բարձրացման կամ նվազման գործում: Այս փոփոխականների միջև հարաբերակցության գործակցի արժեքը դրական է, որն էլ վկայում է այն մասին, որ էթե հասարակության շրջանում բարձրանա կրոնական արժեքների ընդունման մակարդակը, ապա դա կհանգեցնի սոցիալական վստահության բարձր ցուցանիշի ի հայտ գալուն և հակառակը: Ավանդական տիպի հասարակությանը բնորոշ արժեքների ընդունման և սոցիալական վստահության դեպքում ևս Սպիրմենի rho և Կենդալլի tau գործակիցների համաձայն առկա է ուղղակի և նշանակալի կապ: Հետաքրքրական է այն, որ ուսումնասիրվող համայնքում կրթվածության մակարդակի և սոցիալական վստահության միջև նշանակալի կապ չի գրանցվել: Հասարակական խավի և սոցիալական վստահության ցուցանիշի միջև առկա է հարաբերակցություն: Սոցիալական խավի բարձրացման դեպքում սոցիալական վստահության մակարդակը նվազում է և հակառակը: Մարդկային փոխհարաբերություններում ներգրավվածությունը ևս ազդեցություն ունի սոցիալական վստահության մակարդակի փոփոխման վրա: Հասարակական ընդունված արժեքների նակտամաբ լոյալության և սոցիալական վստահության դեպքում Կենդալլի tau և Սպիրմենի հարաբերակցության գործակիցների կիրառությունը ցույց է տվել, որ տվյալ համայնքում հասարակական ընդունված արժեքների նկատմամբ լոյալության փոփոխականը նշանակալի ազդեցություն ունի սոցիալական վստահության մակարդակի վրա:

Հայաստանի գյուղաբնակ եզդիների սոցիալական վստահության առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների վերլուծության հիման վրա կարելի է դուրս բերել հետևյալ **եզրակացությունները:**

- Հետազոտության շրջանակներում մշակված մոդելը, որում հարցվածների սոցիալական վստահության մակարդակն ուսումնասիրվել է ըստ հիմնական, ընդհանրացված և վերացական վստահության ցուցանիշների, վկայում են, որ Հայաստանյան գյուղաբնակ եզդիների շրջանում ամենաբարձր ընդհանրացված վստահության ցուցանիշն է, երկրորդ տեղում վերացական վստահության ցուցանիշն է, որին հաջորդում է հիմնական վստահության ցուցանիշը: Մասնավորապես հիմնական վստահության նկատմամբ վերացական վստահության գերազանցությունը վկայում է այն մասին, որ համայնքի բնակիչների շրջանում հետզհետե աճում է ինստիտուցիոնալ փորձը և գերիշխող են դառնում ժամանակակից, հետարդյունաբերական հասարակություններին



բնորոշ հարաբերությունները :

- Հայաստանյան գյուղաբնակ եզդիների համայնքներում բնակչության զգալի մասի մոտ առկա է ընդհանրացված վստահության բարձր մակարդակ, ինչը վկայում է այն մասին, որ նրանք վստահում են իրենց համայնքում բնակվող, ինչպես նաև համայնքին չպատկանող այլ մարդկանց (օտարներին): Մա վկայում է այն մասին, որ հարցվածների հիմնական մասի մոտ առկա է արտաքին օղակների հետ համագործակցային կապեր ձևավորելու պատրաստակամություն, ինչը գալիս է ընդգծելու Հայաստանի գյուղաբնակ եզդիների շրջանում սոցիալական կապիտալի զարգացման ներուժը:

- Հայաստանի գյուղաբնակ եզդիների շրջանում դեռևս զգալիորեն բարձր է վստահությունը ավանդական սոցիալական ինստիտուտների նկատմամբ (ընտանիք, կրոնական արժեհամակարգ, ազգականներ), որոնք գործառնում են վերագրվող սովորույթների, փորձառությունների, վարքականոնների և ազգակցական կապերի վրա հիմնված մեխանիզմներով: Պատահական չէ, որ ուսումնասիրվող համայնքում սոցիալական վստահություն սերմանելու առանցքային գործոն է հանդիսանում ավանդական տիպի հասարակությանը հատուկ արժեքների տարածվածությունը:

- Հայաստանի գյուղաբնակ եզդիների համայնքում վստահության արմատավորման առանցքային մեխանիզմներից է ներընտանեկան /որպես սոցիալականացման առաջնային ազենտի / հաղորդակցությունն իր բովանդակային և գործառնությանն առանձնահատկություններով:

- Ուսումնասիրվող համայնքում վստահության բարձր մակարդակը պայմանավորող կենտրոնական գործոններից է կրոնական արժեքների, հավատալիքների տարածվածությունն ու կայունությունը:

- Ներխմբային վստահության չորս տարրերի (հարազատների, ընկերների, ընտանիքի անդամների, հարևանների) համեմատության արդյունքները վկայում են , որ ընտանիքի անդամների նկատմամբ հարցվածների վստահությունը ամենաբարձր մակարդակն է գրանցել: Երկրորդ տեղում հարազատների նկատմամբ վստահությունն է, երրորդը ընկերների, ներխմբային վստահության տարրերի թվում ամենացածր մակարդակում հարևանների նկատմամբ վստահությունն է, սակայն այս դեպքում ևս բարձր կամ շատ բարձր վստահություն է արտահայտել հարցվածների կեսից ավելին: Ներխմբային մակարդակում վստահության բարձր մակարդակը պայմանավորված է արյունակցական կապերի առկայությամբ, սակայն սոցիալական տարածության ընդլայնման հետ մեկտեղ այն հետզհետե նվազում է:

- Ուսումնասիրվող համայնքում սոցիալական վստահության ցուցանիշը պայմանավորված չէ հարցվածների տարիքային գործոնով և ամուսնական կարգավիճակով:

- Ուսումնասիրվող սոցիալական արժեքների շրջանակներում սոցիալական արդարության հանդեպ ունեցած վստահության մակարդակն ամենից բարձրն է: Սոցիալական այլ արժեքների՝ ճշմարտացիության, խոստումների կատարման, հասարակական համախմբվածության, պատասխանատվության, ինքնավստահության և մրցակցության հանդեպ ունեցած վստահության ցուցանիշը միջին մակարդակում է:

Ատենախոսության վերջում հեղինակը, հիմնվելով անցկացրած հետազոտության արդյունքների վրա, ներկայացնում է մի շարք առաջարկություններ, որոնք նախատեսում են սոցիալական տարբեր ինստիտուցիոնալ համակարգերում ազգային փոքրամասնությունների ներգրավման կառուցակարգերի կատարելա-

գործում, դրանց ուղղությամբ մշակվող պետական քաղաքականության արդյունավետության բարձրացում:

**Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Akbar Valadbigi, Shahab Ghobadi, The era of globalization and ethnical developments in the Middle East: Current challenges and perspectives of the future// Middle East studies, vol. 5, N.2, France, June 2011, pp. 155-170
2. Akbar Valadbigi, Shahab Ghobadi, The study of elements of work alienation: A case study of the Urmia White Cement Factory, Iran// Asian Social Science, Vol.7, N.6, Canada, June 2011, pp.71-84
3. Akbar Valadbigi, Shahab Ghobadi, Ups and downs of ethnic identity in the era of globalization(focusing on the Middle East region)// INTECH Open Access Publisher, first edition, Croatia, 2011 August, pp.183-198
4. Akbar Valadbigi, Shahab Ghobadi, Rethinking social capital and civil society. Reflection from the recent uprisings of the Middle East // Middle East studies, Vol .6, N.3, France August 2011, pp. 129-144
5. Akbar Valadbigi, Shahab Ghobadi, Civil society and social capital in the modern MENA region: A conceptual analysis// Central European Journal of International and Security Studies, Vol.5, N.3, Czech, August 2011, pp. 217-231
6. Akbar Valadbigi, Shahab Ghobadi, A study of types of social trust and the elements influencing it: the case of the Iranian northern town of Sari // Asian Social Science, Vol.7, N.12, Canada, December 2011, pp. 183-193
7. Akbar Valadbigi, Bagrat Harutyunyan, Studying the peculiarities of social capital among the Yezidi rural population of Armenia (Focusing on the social elements that influence social trust) // SCS Journal-studies of changing societies, Vol.2, Ukraine, July 2012, pp. 113-130
8. Akbar Valadbigi, Bagrat Harutyunyan, Trust; The Social Virtues and the Creation of Prosperity by F.Fukuyama // SCS Journal-studies of changing societies, Vol.1, Ukraine, June 2012, pp. 80-95
9. Akbar Valadbigi, Social trust; The Missing Link of Community Development, // Bulletin of Yerevan State University, Vol.138.5, Armenia, December 2012, pp. 64-74
10. Akbar Valadbigi, Bagrat Harutyunyan, Social trust; a confusion between lost and won; A comparative encounter with social trust among the Yezidis of Armenia and North Iraq// SCS Journal-studies of changing societies, Vol.3, Ukraine, December 2012, pp . 96-102
11. Akbar Valadbigi, Posture of social capital for Communities in Transition(Case Studies in Yezidi rural population of Armenia)// DRUZHBA-international academic online journal, Vol.1, India, February 2013, pp. 64-74

**Акбар Али Валадбейги**  
**Особенности социального доверия сельских езидов Армении**

**Автореферат диссертации на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 00.03 – “Теории среднего уровня, социальные структуры, социальные институты и процессы”. Защита диссертации состоится 08.04.2016г. в 15:00 часов на заседании действующего в ЕГУ специализированного совета № 013 ВАК РА по адресу: 0025, Ереван, Абовяна 52 а, ЕГУ**

**РЕЗЮМЕ**

Современные тенденции научно-технического прогресса и совершенствования коммуникационных технологий способствуют целому ряду изменений в общественной сфере многих стран. Наблюдаемые трансформации находят свои проявления на разных уровнях общественных отношений. В этих условиях одной из злободневных проблем функционирования общественных систем становится проблема социального доверия, которое, в соответствии с мнениями целого ряда исследователей, находится в кризисной ситуации, равно как и те общественные отношения, которые развиваются на основе социального доверия. Не составляют исключения и особенности развития современного армянского общества, в котором упомянутые тенденции отражаются на разных уровнях общественных отношений. В этом контексте особое место занимает анализ механизмов становления и проявления социального доверия в различных социальных группах, в частности, различающихся по этническому или конфессиональному признаку. Езиды, проживающие в сельских районах Армении – это особая этно-конфессиональная группа, которая в силу целого ряда исторических, социально-культурных особенностей ведет обособленный образ жизни, и в течение длительного времени сохраняет свой особый образ жизни. В этом контексте анализ механизмов формирования социального доверия представляет интерес и с точки зрения познания закономерностей ассимиляции и обособления этно-конфессиональных меньшинств в социальной структуре общественных отношений. В результате проведенного комплексного социологического исследования социального доверия среди езидского сельского населения были представлены основные факторы, эффективные в деле улучшения регуляции взаимодействия между езидами и другими группами армянского общества. Научная новизна данной диссертации состоит в выявлении механизмов формирования социального доверия и его особенностей у армянских сельских езидов, а также специфики проявления составляющих элементов социального доверия на микро, мезо и макро уровнях социальных отношений.

Диссертационная работа состоит из трех глав.

В первой главе "Теоретические основы изучения социального доверия" обосновывается значимость социального доверия в современных обществах, показывается его фундаментальная роль в общественных отношениях, представляется ряд теоретических подходов к объяснению феномена социального доверия.

Во второй главе "Езиды в контексте социального доверия" представляется социальный контекст и особенности этно-религиозных, социально-культурных

характеристик езидской этно-конфессиональной общности в их историческом становлении, а также особенности современного контекста их существования.

В третьей главе "Анализ социального доверия езидов сельских общин Армении" автор представляет методологические и методические основы проведенного исследования, модель измерения степени социального доверия, определяет операциональную систему переменных, входящих в модель измерения уровня социального доверия, представляет результаты анализа данных, полученных в результате комплексного социологического исследования. В частности, выявлены основные факторы, которые являются определяющими в процессе формирования социального доверия изучаемой группы.

Диссертация завершается заключением, в котором представлены основные результаты и выводы исследования. На основе результатов исследования можно заключить, что среди сельских езидов Армении наблюдается высокая степень обобщенного типа доверия, что свидетельствует о том, что они в основном испытывают доверие к основным социальным группам и институтам. Также на высоком уровне находится и степень абстрактного доверия. С другой стороны, уровень основного доверия сравнительно низок, что показывает относительно невысокий уровень доверия к конкретным акторам их повседневной жизни. Вместе с тем, результаты исследования показывают, что, тем не менее, среди езидов уровень доверия к родственникам и членам семьи более высок по сравнению с акторами вне рамок семьи и родных (друзья, знакомые, соседи). Среди армянских сельских езидов сохраняется высокая степень доверия к традиционным социальным институтам /семья, церковь, родственники/. Что касается общего уровня доверия в восприятиих представителей наблюдаемой общности, то у большей части респондентов уровень социального доверия оценивается как высокий и очень высокий, что свидетельствует о положительном самовосприятии респондентов в рамках осмысления феномена доверия.

Можно утверждать, что дальнейшая разработка эффективных моделей взаимодействия представителей езидского меньшинства с другими группами армянского общества будет способствовать повышению уровня доверия среди езидов, повысит их интегрированность в обществе, что будет способствовать развитию социального капитала в армянском обществе в целом.

**Akbar Valadbigi**  
**"The peculiarities of social trust among Armenian rural Yezidis"**

**The dissertation for the degree of PhD in sociological science on the speciality IB 00.03 –  
“Middle range theories, social structures, social institutions and processes”**

**The defense will take place on 08.04 , 2016 at 15:00 at the meeting of the Philosophy  
and Sociology Special Board № 013 HAC of RA functioning at Yerevan State University.  
Address: 0025 , Yerevan, Abovyan 52a.**

**ABSTRACT**

Modern tendencies of scientific and technological progress and development of communication means provoke a number of changes related with public sector in many countries. Observed transformations found their manifestation in different levels of social relations. In these conditions one of the topical problems of fictionalization social systems becomes social trust problem, which according number of researchers' opinion is in a critic situation, as well as those social relations, which development based on social trust. No exception the development features of nowadays Armenian society, where noted tendencies find their illustration on different levels of social relations. In this context, occupies a special place analyzing social trust formation and manifestation mechanisms within different social groups, in particular which differed with ethnic or religious lines. At this point of view causes special interest Armenian Yezids community, which members lives mainly in Armenian rural areas. Yezids living in rural regions of Armenia are special ethno-confessional group, which due to a number of historical, socio-cultural features have its unique, isolated lifestyle. In this context an analysis of social trust formation mechanisms represents interest in terms of knowledge about patterns of assimilation in case of special ethno-confessional minorities in a social structure of public relations.

As a result of conducted comprehensive sociological research of social trust among Yezidis rural population, the main factors were introduced, which can efficiently improve the regulation mechanisms of interactions between Yezidis and other groups of Armenian society.

The scientific novelty of this dissertation includes the identification of social trust formation mechanisms and its peculiarities among Armenian rural Yezidis, as well as detection of the manifestation of peculiarities of social trust elements in the micro, middle and macro levels of observed society.

The dissertation consists of three chapters. In the first chapter “ The theoretical foundations of social trust studying ” the author substantiates the importance of social trust in modern societies, shows its fundamental role in public relations, presents a number of theoretical approaches of understanding and explaining the social trust phenomenon.

In the second chapter, entitled “ Yezidis in the context of social trust ” the author provides social context and those ethno religious, socio-cultural characteristics of Yezid's ethno-confessional community in their historical formation, as well as peculiarities of modern context of their existence.

In the third chapter "Analysis of social trust of Armenian rural Yezidis “, the author firstly introduces the methodological and methodical bases of dissertation

research, the model measurement of social trust level, determines an operational system of variables, which are included in the model of social trust level measurement, introduced the results of complex sociological research data analysis. In particular, main factors, which are definitive in a process of formation of social trust in observed group, are revealed.

The dissertation is finalized with the conclusion where the main results and findings of the research are summarized. Based on the research results it can be established that among Armenian rural Yezidis there is a high degree of generalized type of trust which means trust to strangers or people with whom they are unfamiliar. The results of study show that level of abstract trust also have a high degree. This fact indicates that they mostly trust to basic social groups and institutions. On the other hand the level of basic trust is comparatively lower, which indicate relatively non higher level of trust towards the certain actors in daily life. However, the trust towards the family members is higher than the manifestation of trust level towards the actors which are outside the family and relatives / friends, acquaintances, neighbors, strangers/. Among the Armenian rural Yezidis there is a high trust level towards traditional social institutions / family, church, relatives /. In general, according to perceptions of observed community members, the level of social trust is estimated as high and very high, which shows a positive self-perception of Armenian Yezidis in context of understanding trust phenomenon.

From all above mentioned follows, that further processing of effective models aimed to improve the interrelations between Yezidis minority and other social groups of Armenian society, will contribute to growth the level of trust among the Yezidis, their integration in society and as result the level of social capital in the Armenian society will be increased.